



ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Յայտնի է թէ բժիշկն ալ քահանային չափ և նոյն իսկ աւելի՛ խոստովանահայր մըն է։ Հիւանդը բժիշկին կը վստահի կարգ մը խոստովանութիւններ, զորս չի վստահիր նոյն իսկ քահանային. և աւելին, բժիշկը իր անձնական զննութեամբը կարող է հաւաքել կարգ մը գաղտնիքներ ևս։ Արդ, բժիշկը իրաւունք ունի՞ այդ գաղտնիքները զուրս հանել, հասարակաց սեփականութիւն ընել զանոնք։

Այս հարցումին պատասխանը ժխտական է անշուշտ, առաջին նայուածքով իսկ։ Հիւանդը բժիշկին կը վստահի գաղտնիքներ, ա՛յն հասկացողութիւնով թէ անոնք բժիշկին մօտ պիտի մնան իբր գաղտնիք և պիտի ծառայեն իր վիճակին բարելաւմանը։ Այլապէս, անիկա զանոնք չպիտի յայտնէր բժիշկին՝ ի՛նչքան ո՛ր և է ուրիշ անձի։ Դարձեալ, առանց հիւանդին զիւրահաղորդութեան իսկ, բժիշկը՝ իր արուեստին ուժովը՝ կարող է յաճախ ծանօթանալ ա՛յնպիսի գաղտնիքներու, որոնց մասին ոչինչ կարող են գիտնալ կամ կասկածիլ ուրիշները։

Քահանան ի՛նչ զիրք որ կը բռնէ այս մասին եկեղեցական կարգապահութեան տեսակէտէն, նո՛յն զիրքը ունի նմանապէս բժիշկը՝ բժշկական կարգապահութեան տեսակէտէն։ Այսինքն՝ երկուքն ալ իբր խոստովանահայր՝ պարտաւոր են գաղտնապահ ըլլալ։ Խնդիրը սակայն կը կնճռոտի, երբ բժիշկին վստահուած գաղտնիք մը հրապարակելու հարցը մէջտեղ կուգայ հանրային օգտակարութեան տեսակէտէն։ Օրինակ, երբ դատաւարութեան մը լուսաբանութեանը համար կամ արդարութիւնը երեւան բերելու համար կը պահանջուի բժիշ-

կէն շարժիլ հակառակ իր խոստման և կոչումին, և հրապարակել իրեն վտանուած գաղտնիք մը:

Անգլիոյ մէջ, կաթոլիկ քահանան երբե՛ք դատարանին առջև չի մերկացներ իրեն խոստովանողին գաղտնիքները, հոգ չէ՛ թէ տուգանքի կամ բանտարկութեան ենթարկուի իր այդ ընթացքին համար: Ու այս պարագան գիտնալով, դատարանն ալ առ հասարակ մեղմ ու ներողամիտ վերաբերում մը ցոյց կուտայ անոնց հանդէպ: Հիմա կարգը եկած է բժիշկներուն, որոնք դատարանին կողմէ կը բռնադատուին գիացածնին յայանելու առանց այլևայլի, հոգ չէ՛ թէ ի՛նչքան ծանրակշիռ ըլլայ իրենց ընելիք յայանութիւնը: Եւ, սուտ չխօսելու համար, բժիշկը կը կատարէ դատարանին հրամանը, ստեղծ նոյն ատեն իր հիւանդին հանդէպ, որուն խօսք տուած էր իրեն յայանուած գաղտնիքը երբե՛ք դուրս չհանել: Ահաւասիկ բաւական բարդ խնդիր մը:

Ընդհանուր կերպով, բացարձակապէս որոշ է և բանաւոր, որ բժիշկը չըլլայ թուլ բերան, ու հիւանդի մը մասին իր գիացածները դուրս չտայ աջ ու ձախ: Այս մասին երկու տարբեր կարծիք պաշտպանել կարելի չէ՛. և այն բժիշկը որ ասոր հակառակ կը գործէ, այպանելի է և արդէն իսկ ժամանակի ընթացքին կը կորսնցնէ ժողովուրդին վստահութիւնը: Եթէ ո՛չ ուրիշ պատճառով, իր շահուն համար իսկ բժիշկը ստիպուած է չափազանց դիւրահաղորդ չըլլալ այդ ուղղութեամբ: Այս բոլորիս, միաքիս առջև կուգայ բաւական հմուտ և շատ պատուական բժիշկ մը. որ իր գտնուած միջավայրին մէջ չյաջողեցաւ, որովհետև քիչ մը շատախօս էր և հիւանդի մը քովը նստած ատեն՝ ասկէ անկէ ու բնականաբար նաև ասո՛ր անո՛ր վրայ դրուագներ կը պատմէր, և իր ունկնդիրներուն վրայ ազդելու համար՝ իրեն աւանդ արուած գաղտնիքները դուրս կը հանէր:

Դժուար է սակայն քար լուծիւն պահել դատարանին առջև, ուր արդարութիւնը երեւան հանել կ'աշխատի գաղտնիքը: Կրնայ ըլլալ որ բժիշկին գաղտնապահութիւնը սխալ ուղղութեան առաջնորդէ դատական հետազօտութիւն մը: Արդ, բժիշկը կ'արդարեւնա՛յ երբ յամառի բերանը կղպել ու ճշմարտութիւնը չըսել: Այս մասին երկու կարծիք կայ: Եղած են բժիշկներ, որոնք իրենց կոչումին պահանջը նկատած են գաղտնիք չտալ դատարանին, յանձն առնելով նոյնիսկ տուգանք և բանտարկութիւն, իբրև օրէնքի անսաստողներ: Միւս կողմէ ալ սակայն, արդարութեան սիրոյն, ճշմարտութիւնը երեւան հանելու համար, առանց խղճահարութեան՝ գիացածնին պարզած են դատարանին առջև, ուրիշներ:

Բժիշկին համար՝ գաղտնապահութիւնը պէ՛տք է ըլլայ սկզբ-

բոււնք, իբրև ընդհանուր կանոն: Սակայն ինչպէս արդէն ըսուեցաւ, պաշտօնական և ստիպողական պարագաներու տակ ալ, խոնձութիւն է կարծեմ, ըլլալ նուազ խտապահանջ: Պատահած է որ բժիշկը ինքզինքը փորձանքի մէջ ձգած է առանց յետին միտքի, ընկերութեան մէջ յայտնութիւն մը ընելով ա՛յս կամ ա՛յն հիւանդին նկատմամբ: Իր խօսքերը փոխուած կամ չարափոխուած են և բժիշկը դատապարտուած է չարախօսութեան ամբաստանութեամբ: Պատահած է նոյն իսկ որ հիւանդին մէկ ազգականը, և մօտիկ ուղականը՝ «խօսքը մէջերնիս» ըսելով բժիշկէն տեղեկութիւններ ուղած է հիւանդութեան մասին. յետոյ «ճոխացեալ և յաւելեալ» ասդին անդին ցանցնած է այդ գաղտնիքը և բժիշկը եղած է գէշ մարդ: Այսպիսի պարագաներու մէջ, ամէնէն ապահով ճամբան է հաւատարիմ մնալ բժշկական գաղտնապահութեան սկզբունքին: Եւ ժողովուրդն ալ թո՛ղ սորվի թէ բժիշկը մուսնետիկ չէ՛:

Յէֆրան

ԲԺ. ՅՈՎՍ. ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԿԵՂԾՄԱԶԿԻՆ ԴԷՄ



Ապրիլ 22-29, կեղծմաշկի (գուշ-պօղան, *diphthérie*) դէմ պայքարի եւ պատուաստումի Շաբաթ յայտարարուեցաւ Ֆրանսայի մէջ, Առողջ. նախարարութեան կողմէ, ժողովուրդին ծանօթացնելու համար այդ ահաւոր հիւանդութեան վտանգները եւ պատուաստումի բարիքները: Մինչեւ 1894 թուականը, կեղծմաշկէ բռնուած երախաներուն 70 առ 100ը կը մեռնէին: Շնորհիւ կեղծմաշկի դէմ շիճուկի (*sérum*) գիտին, այժմ հիւանդներէ մեծ մասը կ'ազատի: Երեք տարի առաջ գտնուեցաւ նաեւ այդ հիւանդութեան դէմ պատուաստ մը (*anatozine*), զոր երեք անգամ ներարկելով երախաները կը պատուաստուին եւ այլեւ կեղծմաշկով չեն վարակուիր: Շնորհիւ այդ պատուաստին կարելի պիտի ըլլայ անհետացնել կեղծմաշկը, ինչպէս ծաղկախտը՝ շնորհիւ ծաղիկի պատուաստին: Ուտի, շերմապէս կը յանձնարարենք մեր ընթերցողներուն պատուաստել տալ իրենց գաւակները (2—15 տարեկան) այդ նոր պատուաստով, որ ԲԱՅԱՐԱՎԱԿԱՅ ԱՆՎՆԱՍ է: Փարիզի մէջ Կ. Խաչի Բուժարանը կը շարունակէ ձրիաբար պատուաստել ամէն չորեքշաբթի առաւօտ: